Այս առթիւ մեր շնորհակալութիւնը փութամք մատուցանել համայն բաժանորդաց, որք սիրով ընդունելով և յօժարակամ ընթեռնելով Արարատ Ամսագիրները, թէ նոցա կարևոր պարունակութիւններէն բաւական տեղեկութիւնք քաղեն և օգտուին, և թէ նիւթապէս նպաստեն Տպարանի Մայր Աթոռոյս։

Շնորհակալութիւն մեծ մեր ամենայն Գործակալաց, որք սիրայօժար կամօք վարեցին Ամսագրոյս գործակալութեանց պաշտօնքը, և արդիւնաւէտ կերպիւ աշխատեցան և անշուշտ եմք զի աշխատին այսուհետև ևս ազգասիրաբար։

Շնորհակալութիւն նոյնպէս այն ամեն ազգայնոց՝ որոց իւրաքանչիւրն ըստ կարեաց փութացին իւրեանց զգացմանց և ըղձից թարգման լինելով թէ դաստիարակութեան վերաբերեալ՝ և թէ այլ ուսումնական և կարևոր առարկայից խորհրդածութեանց և դիտողութեանց պիտանի յօդուածներով գործակից լինել մեզ՝ և յորդոր կարդալ մերազնէից միջոցաւ Ամսագրոյս։

Վանից անդամ է ի Օմիւռնիա քաղաքէն Գործակալ Մեծապ. Պ. Ղուկաս Պալդազարեանց Խմբագիրն Երշալուսոյ Արարատեան՝ միջոցաւ իւր լրագրոյն կիմացնէ մեզ Արարատների ուշ կամ ոմանց ամսագրոց երբէք չստացուելոյն համար։

Երդարև զարմանք և ցաւ է մեզ, որ Խմբագրութիւնը — բացառութեամբ վերջին չորս ամսոց — ամեն ամիս Ռուսաստանի հետ նաև Կ. Պոլսոյ և Օմիւռնիոյ Արարատ ամսագիրները ի միասին կը յանձնէ արքունական սուրհանդակատան տեղւոյս, և կը յղէ, բայց չգիտեմք թէ ինչ է պատճառ՝ զի ինչպէս անցեալ տարի՝ նոյնպէս այս տարի Օմիւռնիոյ ամսագիրները կը յետանան յոյժ կամ կը կորչին։

Յանցելումն Գ. շրջանի Օգոստ. և Նոյեմբ. ամսագրոց համար Սինոդի կողմանէ գրուեցաւ Պոլսոյ Ռուսաց Սուրհանդակատան՝ խնդրելով նոյն ամսագրոց համար տեղեկութիւն, և պատասխանեցաւ իբր թէ խրկուած լինէին ի Օմիւռնիա, սակայն ցարդ մեր Մեծ. գործակալին տուած տեղեկութիւն հակառակը կը յայտնէ։

Ամենասիրելի Գ. շրջանի Յունիս և Էն. ամսագրոց համար ևս կը հաղորդէ Մեծ. Պալդազարեան միջոցաւ Երշալուսոյ, թէ ցարդ չէ ստացեալ։ Ուստի Մեծ. Պալդազարեանցին կիմացնեմք՝ որ սոցա համար գրագրութիւնք պիտի բացուին հարկաւոր եղած տեղեաց հետ։

ՎՐԻՊԱԿՔ

Ներկայ ամսագրոյս Գրդ թերթի (56րդ) 427 էն 14 երեսաց երեսահամարներ սխալ դրուած են ցերեան 440։

Նոյնպէս 57 րդ ընդհանուր թերթահամարը սխալմամբ 56 դրուած է ի ստորին լուսանցն։